

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ)

Հայ Եկեղեցու անցած պատմական ուղին և նրա կերպարը բնորոշելու տեսակետից, խիստ ուսանելի է վերանայման ենթարկել Հայ Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսության բռնած դիրքը դեպի Հայ Պետականությունը։

Արդեն իսկ ճանաչված իրողություն է, որ Տրդատ թագավորի և Ս. Գրիգոր Լուսավորչի միասնական գործունեությունը՝ Քրիստոնեությունը պետական կրոն դարձնելը և այն արմատավորելը— հայ պետական և հոգևոր իշխանությունների համերաշխ գործունեության հիմքն էին դնում, որը նվիրական սկզբունք պիտի դառնար Հայոց Եկեղեցու համար հետագայում։ Հայ Պետականությունը պահպանելու համար անհրաժեշտ էր, որ Հայ Ժողովուրդը իրեն շրջապատող հեթանոս միջավայրից դուրս գար, ստանար նոր կողմնորոշում և կտրեր հեթանոս ժողովուրդների հետ ունեցած կրոնական կապերը և հասկացողությունները, որպեսզի նրա հայրենասիրությունը ստանար նոր գույն և նա ապրեր նոր վերելքներ ու հոգևոր կյանք, ձերբազատեր իրեն կուլ գնալու և ձուլվելու վտանգից, վերջնականապես և ընդմիշտ կաղապարեր իր ազգային կերպարը։

Հասկանալի է, որ պետական երկու մեծ գործիչները՝ Տրդատ թագավորը և Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում Քրիստոնեությունը հաստատելով և արմատավորելով, Հայ Ժողովրդի համար նվաճում էին երկու խոշոր հաղթանակներ. ա) նրան հնարավորություն էին տալիս ազգայնապես կողմնորոշվելու և հեթանոս միջավայրից դուրս գալու, որպիսի հանգամանքը Հայ Պետականության համար անհետաձգելի անհրաժեշտություն էր Արևելքի պայմաններում, բ) լայն հնարավորություն էին ստեղծում նրա հոգևոր կյանքի զարգացման համար, տալով նրան քրիստոնեական ճշմարտությունները և նրա գաղափարական հզորությունը, որ նույնպես անհրաժեշտ էր նրան այն ժամանակվա պատմական իրադրության մեջ իր քաղաքական-ազգային-բարոյական կերպարը կաղապարելու համար։

Հիրավի, Քրիստոնեության կապակցությամբ հետագայում Հայ Ժողովուրդը ձեռք բերեց մի շարք նվաճումներ, որոնք դարեր շարունակ նրա գոյության խարիսխները հանդիսացան և նրա մարտունակության և ինքնապաշտպանության զենքերը։ Այդպիսիներն էին հայոց գրերի գյուտը, Հայ Ժողովրդի ազգային դրականությունը, հայ արվեստն ու մշակույթը։

Հայ Եկեղեցին և Ամենայն Հայոց կաթողիկոսները հետևողականորեն պահպանեցին Հայ Պետականության պաշտպանության դիրքերում մարտնչելու հերոսական կամքը և անշեղ կերպով քայլեցին Հայ Պետականության հետ, հանուն Հայ Ժողովրդի և Հայրենիքի։

Անշեղորեն գործադրելով այս արդեն սրբազան պատգամ դարձած հասկացողությունը, Ամենայն Հայոց կաթողիկոսները և Հայ հոգևորականությունը մեր պատմությունը լուսավորեցին բազմաթիվ և բազմազան հերոսապատումներով։

Եվ ահա պատմական դեպքերը եկան ապացուցանելու թե որքա՜ն ճիշտ էին եղել Տրդատ Թագավորը և Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ կրոնական նոր ուղին Հայաստանում գծելու տեսակետից, դեպքերն ապացուցեցին թե որքա՜ն փրկարար էին գրերի գյուտը, անմահ Մաշտոցը, Սահակ Պարթևը և մեր ազգային գրականության աստղաշարը, մեր պատմիչներն ու գրիչները։

Ահա գոռոզ Սասանյանները Հայությունը ձուլելու իրենց պիշատիչ քաղաքականությամբ, իրենց փղերով և զորաբանակներով։ Ահա Աշտիշատը, Հովսեփ կաթողիկոսը և Ղևոնդ երեցը իրենց մարտակոչերով և ըմբոստացումով։ Ահա և Ավարայրը, Վարդանը՝ հազար երեսունվեց վկաներով։ Ահա Գյուտ կաթողիկոսը, Հովհան Մանդակունին, իրենց անընկճելի պայքարով, իրենց համառ դիմադրությամբ։ Ահա և Վահանանք իրենց վերջնական հաղթանակներով։ Այնուհետև Վկայասերը, Շնորհալին, Տաթևացին իր հետևորդներով, շատե՜րը, շատե՜րը։

Հինգերորդ դարի առաջին քառորդից սկըսած, Հայ Ժողովուրդը և Հայ Եկեղեցին առաջնորդվեցին Ս. Սահակ Պարթևի հետևյալ պատգամով. «Ես իմ հիվանդ ոչխարը չեմ փոխի օտարի առողջ գայլի հետ»։ Այս փրկարար տեսակետը ուղեցույց աստղ հանդիսացավ Հայ Եկեղեցու համար հետագա դարերի ընթացքում։

Պատկերավոր այս արտահայտությամբ, Ս. Սահակը մատնանշում էր Հայ Պետականության, ազգային իշխանության և նրա պահպանման անհրաժեշտությունը։ Մատնանշելով Հայրենական Իշխանության և օտար տիրապետության սուր հակադրությունը, Ս. Սահակ Պարթևը նախազգուշացնում էր, որ օտար տիրապետությունը, ինչպիսին էլ նա լինի, այնուամենայնիվ հոշոտող գազան է և այն երբեք հարազատ լինել չի կարող։ Այսպիսով, նա թելադրում էր Հայ Եկեղեցուն և հոգևորականությանը՝ միշտ կանգնած մնալ Հայրենի Պետականությունը պաշտպանելու դիրքերում, քանի որ այդ Պետականությունը — նույնինքն Հայ Ժողովուրդն էր և նրա մարմնացումը։

Բնականաբար, Հայ Եկեղեցին պիտի մարմնավորեր Ս. Սահակ Պարթևի պատգամը և այն դարձներ կենդանի գործ։ Այսպիսի դիրքավորումը ուներ իր լուրջ դրդապատճառները։ Հայ Եկեղեցին կրոնական հաստատություն լինելու հետ միասին ժողովրդական հաստատություն էր, ուր հայ հավատացյալ մարդը ամփոփել ու արմատավորել էր իր ավանդությունները, ազգային սովորույթները և դրոշմել էր այնտեղ իր կնիքը։

Հայ Եկեղեցու և հայ հոգևորականության գոյությունը պայմանավորված էր Հայ Ժողովրդի գոյությամբ և այն կոչված էր ծառայելու Հայ Ժողովրդին, սպասարկելու նրան, բավարարելու նրա հոգևոր կարիքները։

Հայ Եկեղեցու՝ Ժողովրդին սպասարկելու հանգամանքից բխում էր նաև Ժողովրդին առաջնորդելու, հուսադրելու և մխիթարելու հանգամանքը։ Որպես կրթված և առավելապես կազմակերպված, գիտակից խմբակցություն, բնականաբար հոգևորականության վրա էր մնում հավատավոր Ժողովրդին իր սկզբունքով դաստիարակելու պատասխանատվությունը։ Եվ, վերջապես, ամենագըլխավորը և հիմնականը՝ չէ՞ որ Հայ Եկեղեցին իր հոգևոր դասով նույն Ժողովրդի և Հայրենիքի մի մասնիկն էր, չէ՞ որ կաթողիկոսից սկսած մինչև եկեղեցու համեստ պաշտոնյան նույն հող ու ջրի զավակներն էին, կապված իրենց մերձավորներով, հող ու ջրին, իրենց հարազատների և իրենց Հայրենիքի հետ անհուն սիրով, այստեղից էլ բխում էր իրենց մայր հողը, իրենց ընտանեկան օջախը և իրենց Պետականությունը պահպանելու անմիջական պարտավորությունը։

Հայ Եկեղեցու դիրքը՝ Հայ Հայրենիքը և Հայ Պետականությունը պաշտպանելու խնդրում, այնքան բնական է, որքան բնական է կանաչի ձգտումը արևին ու լույսին, մարդու ձգտումը օդին ու ջրին։

Հայոց Հայրապետները պատվով կատարեցին իրենց այս սրբազան պարտքը Հայ Ժողովրդի հանդեպ։ Հիշենք վերջին ժամանակաշրջանից Վարժապետյանին, Արղությանին, Աշտարակեցուն, Խրիմյանին, Իզմիրլյանին, և այլն։

Հայրենի Իշխանությունը կորցնելուց հետո, Հայ Ժողովուրդը համառ և անդուլ պայքար մղեց հանուն Հայ Պետականության վերականգնման և ազգային անկախության։ Հայոց Եկեղեցին կարողացավ Ժողովրդի մեջ վառ պահել ազգային գիտակցականության և Հայ Պետականության գաղափարները։ Հայ Եկեղեցին հայրենի վանքերը դարձրեց հայ մատենագրության օջախները և հայրենի ոգեշունչ գրականության հատորներով, մագաղաթի լուսաշող բուրգերով անմար և վառ պահեց Հայ Ժողովրդի ազատագրման և Հայրենի Պետականության լուսաշող ու փայլուն հեռանկարները։ Վառ պահելով Ժողովրդի մեջ Հայության ազատագրության ոգին, Հայ Եկեղեցին միաժամանակ հորդորեց պայքարել հանուն Հայ Հայրենիքի ու Պետականության, քաջաբար հաղթահարել պատմության

ու ժամանակների բերումով իրեն բաժին ընկած անլուր զրկանքներն ու տառապանքները։

Ժողովրդի մղած ազատագրական պայքարը և նրա կրած անխիվ զոհաբերությունները, վերջապես, հասան իրենց վախճանին. մի լուսաշող առավոտ Հայ Ժողովրդի առաջ բացվեցին ազատության և հաղթանակի դռները։

Հանդուգնության իրողություն է, որ նախահոկտեմբերյան շրջանի մեր պատմության մի քանի տարիները, դաշնակների ավանտյուրիստական ապիկար և անպտուղ գործունեության պատճառով, որքան ողբերգական ու աղետաբեր եղան։ Լծվելով օտար պետությունների քաղաքական կառքին և դառնալով նրանց հլու կամակատարները, դաշնակները կանգ չառան ամենաանթույլատրելի միջոցների առաջ իսկ, Հայ Ժողովրդի ազատագրական և ինքնորոշման շարժումները խեղդելու համար։ Հայտնի է թե ինչպիսի՛ արյունալի ոճիրներով խեղդեցին մայիսյան ապրստամբությունը։ Օտար պետություններին ստրկորեն ծառայելու տենդը հասավ իր գագաթնակետին, երբ նրանք փորձեցին Հայաստանը դարձնել նրանց պլացդարմը Սովետական Միության դեմ ինտերվենցիա կազմակերպելու համար։ Դաշնակների ավանտյուրիստական գործունեության հետևանքն եղավ այն, որ Հայ Ժողովուրդը քայքայվեց, և կանգնեց կորստյան վիհի առաջ, ենթակա բնաջնջման ու ոչնչացման։ Հիրավի, այն իսպառ պիտի ոչնչանար և անհետանար պատմության բեմից, եթե վրա չհասներ և օգնության չգար ազատարար և փրկարար Սովետական Իշխանությունը։

Համաձարեղ Լենինի և ժողովուրդների առաջնորդ, Հայ Ժողովրդի լավագույն բարեկամ մեծ Ստալինի ցուցմունքով Կարմիր Բանակն օգնության ձեռք մեկնեց ապրստամբված հայ աշխատավորությանը. 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայ Ժողովուրդը թոթափեց դաշնակների տիրապետությունը, դուրս շպրտեց նրանց մեր երկրից և հաստատեց Սովետական Իշխանություն։

Շունչ քաշեցին մեր հողերը, մեր գյուղերը, մեր օջախները, հայ գյուղացին և բանվորը, համայն Հայ Ժողովուրդը ազատվեցին կոտորածի և ավերի մղձավանջից։ Արևը նոր փայլ ստացավ, մեր հողերը հագան ցնծության և բերկրանքի ծիրանին։ Հայ գութանը, մուրճն ու մանգաղը, իսկ հետագայում տրակտորներն ու կոմբայնները սկսեցին գործել, զրնգացին մեր տարերը, ծփացին մեր գետերը։ Համայն Ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց սովետական փրկարար, ազատարար արևի ծագումը։

Կյանքը մտավ իր բնականոն հունի մեջ, բացվեցին աշխատանքի, լույսի և գիտության դռները։ Հայ մարդը փարվեց իր հողին ու ջրին, կյանքն սկսեց ծաղկել, վերածնվել ու վերակառուցվել։

Կյանքի կոչվեց Հայ Պետականությունը, Սովետական Պետականությունը։ Հայ Ժողովուրդը փրկված էր։

Հայ Եկեղեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ցնծությամբ դիմավորեցին Հայ Ժողովրդի ազատությունը և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։ Սովետական կարգերի շնորհիվ մեր երկիրն սկսեց օրավուր աճել ու զարգանալ։ Ամենակարճ ժամանակում Հայ Ժողովուրդը կազմակերպեց իր արդյունաբերությունը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը։ Մեր երկիրը ձեռք բերեց ժամանակակից տեխնիկան ու գիտությունը։ Մեր Ժողովրդի հատարակական զարգացումը աննախընթաց վերելք ապրեց։ Գրականությունը, արվեստը և կրթական գործը ըստ ամենայնի ծավալվեցին ու զարգացան վերելքի ապշեցուցիչ ցուցանիշներով։ Մեր երկիրը դարձավ Սովետական Միության ծաղկուն հանրապետություններից մեկը։

Սովետական Միության ժողովուրդների բարվոք կացությունը և ծաղկուն վիճակը աչքի փուշ եղավ գերմանական ֆաշիստների համար և նրանք փորձեցին արյան մեջ խեղդել մեր ժողովուրդներին։ Սկսվեց Հայրենական պատերազմը։

Ի՞նչ էր Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայ Եկեղեցու դիրքն այդ օրերին։

Մեր մեծագործ Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ.-ը (այն ժամանակ Տեղակալ), պատերազմի առաջին իսկ օրերին կանգնեց մեր Պետականությունը պաշտպանելու մարտական դիրքերում։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր նյութական սուղ միջոցներից զգալի գումար հատկացրեց Հայրենական պատերազմի ֆոնդին։ Սրան հետևեցին Վեհափառ Հայրապետի քարոզները, կոչերը, ուղղված համայն Հայության, մեր բոլոր եկեղեցիներին՝ մեկ մարդու պես ոտքի կանգնելու և պաշտպանելու մեր փառապանծ Հայրենիքը։ Ինչպես Հայաստանում և Սովետական Միության մեջ, նույնպես և Սփյուռքի հայկական հատվածներում լայն արձագանք գտան Վեհի կոչերը։ Կազմակերպվեց գեներալ Բաղրամյանի անվան ֆոնդը և «Սասունցի Դավիթ» անվամբ տանկային շարասյունը։ Հայ Եկեղեցին, հավա-

տարիմ իր ավանդական սկզբունքին, իր համեստ մասնակցությունը բերեց իր նվիրական Հայրենիքի պաշտպանության գործում։

Հայ Եկեղեցին, պահպանելով արդեն սրբություն դարձած հայրենանվեր պատգամը՝ «Հայ Ժողովրդի հետ, հանուն Հայ Հայրենիքի և Հայ Պետականության», կատարեց իր պարտքը Ժողովրդի և Հայրենիքի հանդեպ։

Հայ Եկեղեցու և հոգևորականության այսպիսի դիրքավորումը բխում է մեր Եկեղեցու և մեր Ժողովրդի փոխհարաբերություններից։ Հայ Եկեղեցու առանձնահատուկ գիծն է՝ «Ժողովրդի համար, հանուն Ժողովրդի, Հայրենիքի համար, հանուն մեր Պետականության»։

Այս հասկացողությունը կոփվել և մարմնավորվել է դարերով. այն սրբագործվել է Հայ Ժողովրդի արցունքով և արյունով, նրա անլուր տառապանքներով, նրա ըմբոստացումներով ու պայքարով, մեր սերունդների և նահատակների մորմոքուն բաղձանքով, մեր ժողովրդի ազատագրական իղձերով։ Այդ հասկացողությունն է կազմել մեր Եկեղեցու ողնաշարը, առանց այդ սրբազան պատգամի և հասկացողության, Հայ Եկեղեցի չկա և գոյություն ունենալ չի կարող։

Ահա թե ինչո՛ւ Հայ Եկեղեցին դարեր շարունակ կանգնել է իր Ժողովրդի և իր Պետականության կողքին և պիտի շարունակի այդ ուղղությունը նաև հետ այսու։

Այս հանգամանքն է, որ խմաստավորում ու փայլ է տալիս մեր Եկեղեցուն, այս հանգամանքն է, որ պայծառ և անմահ է պահում նրա կերպարը, արժեքավորում նրա հոյակապ պատմությունը։